

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

(**Սարաքաղաքացիք զինում են ուղղակի**
Тифлисъ. Редакція „*Мшакъ*“

STILL

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Գաղաթափան մերժին անցքերը: — Եւ երբ ին տե-
ս ու թ ի չն: Նամակ Վարդաշէնից: Նամակ Ղար-
սից: — Արտաքին տեսող թ ի չն: Բեղիկ: Նա-
մակ Պարսկաստանից: — Վէշակոյն: Հնգադիրներ: —
Յայտարարութիւններ: — Բանասիրական: Եւ-
րոպայի նիւթական հարստութիւնը:

ԲԱՆԿԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑԳԵՐԸ

Ուղեւորվելով Վարդին, իր կա-
լուածը, իշխան Բիսմարկ հարկա-
ւոր համարեց տեղեկութիւն տալ
բոլոր կուսակցութիւններին Պեր-
մանիայի այժմեան ներքին քաղա-
քականութեան մասին: Ի՞նչ հա-
յեացքները և մեկնութիւնները
իշխանը տալեց գերմանական կա-
ռավարութեան պաշտօնական լը-
րագիրների մէկի մէջ:

խօսելով պարլամենտի նախկին նախագահ ազատամիտ կուսակցութեան անդամ Ֆօրկենբեկի հրաժարականի և նրա պաշտօնի համար պահպանողական Օէյդեւիլիցի, իսկ փոխնախագահի պաշտօնի համար կղերական Ֆրանկենշտեյնի ընտրվելու մասին, իշխանը այն կարծիք է յայտնում, որ կատարված այդ իրողութիւն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԹՊԱՅԻ ՆԻԹԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներկայ աշխատութեանն նպատակն է ծանօթացնել մեր ընթերցողներին Եւրօպայի նիւթական հարստութիւնների հետ: Վաղուց է մենք ձեռք ենք մեր հայեացքները Եւրօպայի վրա, ընդունելով նրան իբրև մեր ուսուցիչ գիտութեան լուրջ Տիւղերուն և հայազգը դրանում չի զղչւց: Մերը յետ մտայած ազգ ենք, աչքերներս բոլր բացված, մենք գգուն ենք և պարզապէս տեսնում թէ ինչ մոթ իսաարի մէջ ենք, թէ ինչ թանձր մթնոլորտի մէջ ձմրված և խեղդված ենք: Դարեւոր այդ քննիչ մեզ գարթեցնելու համար հարկաւոր էր մի ոյժ, մի զօրաւոր ճառագայթ, մի մեծ գարկ և այդպիսին ներկայացաւ. դա այդման Եւրօպան է իր քաղաքավորութեամբ: Երբ ոչ ոք չէ ուրանում Եւրօպայի այդ դերը մեր ներկայի և ապագայի համար, երբ նրան ցանկանում ենք ճանաչել իբրև մեր առաջնորդ, այն ժամանակ մենք սկստի աշխատենք ծանօթանալ նրա հետ բոլոր կողմերից, հասկանալ թէ ուր է և ինչ է նրա իսկապէս ոյժը, Սկսել միայն այդպիսի ծանր և ընդարձակ ձեռնարկութիւն մեր գիտաւարկութիւնը չէ այս բապէս, այն ժամանակը այստի յօտանել բոլոր ինչ ուր ներկայացնում է

Ներք բոլորովին չեն ազդի Գերմանիայի ներքին քաղաքականությանն իրա:

Ազատամիտ նախագահ Փօր-
կենքեկ կառավարութեան վերա-
բերութեամբ այնպիսի թշնամու-
կան ընթացք բռնեց, որ այլ ևս
իր պաշտօնի մէջ նա չէր կարող
մնալ։ Սի ուրիշ նախագահ նրա
տեղ կարեւի էր ընտրել ազատա-
միտ կուսակցութեանից, բայց նոյն
իսկ այդ կուսակցութիւնը չը հա-
մաձայնեց և բացի այդ հրաժար-
վեցաւ մասնակցել նախագահի ըն-
տրութեան համար եղած քուէար-
կութեանը։ Այդպիսով նոյն իսկ
ազատամիտները պատճառ եղան,
որ պարլամենտի մէջ պահպանու-
ղական մեծ կուսակցութիւն կազ-
մվեցաւ և այդ կուսակցութեանը
պատկանող մի անդամ պարլամեն-
տի նախագահ ընտրվեցաւ։ Այս-
պիսով իշխան Բիւմարկ նախա-
գահական ընտրութիւնների հետե-
ւանքի համար մեղադրում է ա-
զատամիտ կուսակցութիւնը։

Հարուսակներով իր բացասորո-
թիւնները իշխան Ռիմարի ա-
սում է, որ չը նայելով թէ ինքը
հիմալում է պահպանողական և
կղերական կուսակցութիւնների մե-

Եւրօպայան. մեր նպատակը աւելի համառոտ է. ծա-
նոթանալու ընթերցողին այդ հրկրի նիւթական հա-
րստութիւններէ հետ աղայէս, ինչպէս նա ալ յոմ
կայ. ցոյց տալ Եւրօպայի զանազան տէրութիւննե-
րի առանձնապատկառութիւնները անուանական կէտեց
զբանով ընթերցողը կը տեսնէ ինչով մի տէրու-
թիւն ուժեղ է, ինչով յառաջագոյն, ինչով նա պահ-
պանուած է ե զարգանում: Մենք մի ազգային օգուտ
ունենք. այդ բոլորի հետ ծանօթանալ, որպէս զի
համեմատական մեթօդով կարողանանք մեզ ինքնե-
րիս լաւ ճանաչել, ուշադրութիւն դարձնել յայտ-
նի բաների վրա ե պատճառստեղ հաստատ հիմք մը
ապաքալ կանգնի համար:

Աւելորդ է ասել որ լրագրական նեղ չըջանները մեզ թեղ չեն տալ մտնել հարցերի բոլոր մանրամասնութիւնների մէջ. մինչ կախատենք զծագրի ալր խնդիրները իր ընդհանուր գծերում:

Կարծես մի մօղ է զարձած, որ, խօսելով հրկր
 հարստությունների վրա, միշտ սկսում են հրկրա
 դրծությունամբ: Խախպէս, որքան մի հրկիր զար
 զանում է, նոյնքան նրա հողագործութիւնը յառա
 ջանում է. ինչ համեմատութիւն են նաւոր է լինե
 կատարելագործված անգլիական և արտապետական
 ռուսական հողագործութեան մէջ. քանի ստոր
 կուլտուրը, երկրի լուսաւորութիւնը, այնքան ստոր
 են և արուեստները *), այնքան ստոր են նաև եր
 կրագործական եղանակները: Այդ զանազանութիւն
 ներք լաւ զգալու համար, վերինեք երեք երկիր
 իւրիւր, Մեկեղեկուրդը (գերմանական երկիր) և Ջի
 նաստան, որոյնց իւրաքանչիւրը զանազանութիւն
 միւսերից իր կուլտուրով, ռուսի և երկրագործական

*) Արուեստ բառով մինք ուզում ենք յայտնել եւրօպական industrie բառի միտքը, իսկ արհեստ բառով métier, ремесло:

ճամանուլթեան վրա, այդ մեծա-
մանուլթիւնը ոչինչ ազդեցութիւն
չէ կարող ունենալ Գերմանիայի
ներքին և արտաքին քաղաքակա-
նուլթեան վրա, որովհետեւ զա-
միայն «տնտեսական» մեծամաս-
նութիւն է:

Այդ ճարպիկ բացատրում[Թիւ-
նը, ինչպէս երեւում է լրագիր-
ներին, շատ լաւ տպագրութիւն
չը գործեց հասարակութեան վրա:
Այսպիսի հետեւանքների չէին սը-
պասում գերմանացիք, մի քանի
տարի շարունակ պաշտպանելով
պետական կանցլերին, երբ նա ա-
նողքը պատերազմ էր յայտնել
Վատիկանին: Պերմանացիք չէին
մտածում, որ մի ժամանակ կղե-
րական քաղաքականութիւնը յաղ-
թող կը հանդիսանայ, երբ նորա
հպարտութեամբ նայում էին, [Թէ
ինչպէս «երկաթեայ կանցլեր»
բանտն էր դնում կաթօլիկ եպիս-
կոպոսներին և նրանց կայքը ծա-
խում էր աճուրդով տուգանքները
ստանալու համար:

Գերմանացիք միայն կղերական
քաղաքականութեան աջողութե-
նից չեն վախենում. նկատելով
կենսութեան աջողութիւնը նոքա եր-
կիւղ են կրում գերմանական կայ-

հեղանակներով: Այնպե՞ս նրանցից առաջինը՝ Ֆեդրան արդիւնաբերում է իւրաքանչիւր քառակուսի մզնի վրա միջին թւով աւելի քան 7,300 մարդու համար ուտելիք (ցորեն, կանաչեղեն, և այլն), երկրորդ երկրի՝ Մեկլենբուրգի եղանակով հշակում հողը տալիս է միայն մօտ 3,200 հոգու համար ուտելիք, իսկ երրորդ Չինաստանի եղանակով ստացվում է միայն 2,200 մարդու համար: Ուրեմն երկրագործութիւնը մեծ կապ ունի միւս արտեւսանքների գարգացման հետ: Նոյն իսկ մի և նոյն երկրում, օրինակ Պրանսիայում, հողագործութիւնը այն գնաւորներով աւելի ցածրացած է, ուր ամենից շատ գործարանական շարժողութիւն կայ, այն է հիւսիսային Պրանսիայում, մինչդեռ հարաւային Պրանսիայում, ուր աւելի են զարապում հողագործութիւններ, լայց ուր հիւսիսի նման գործարանական մեծ շարժողութիւն չը կայ, հողագործութիւնը առաջինից աւելի ստոր է:

Իսպից ինչ և ինչէ, Եւրօպայի ամենամեծ հարստութիւնները կայանում են, եթէ դուստրով հաշուելունը, գործարանական արուեստների մէջ և այս վերջինների արդիւնքներն են կազմում գլխաւորապէս տէրութեան գլխաւոր մուտքը: Այնու ամենայնիւ երկրագործութիւնը ունէք և պահում են ինչ այժմ էլ միշտ առաջին տնայլը և դուրս պատճառներից ամենաազդեակորը նա է, որ համարեա բոլոր երկրներում, կրթեալ թէ անկրթ, ընակիչ ներկ ամենամեծ մասը զբաղված են այդ գործով և երկրորդ, որ որքան և հողը յետ մնար միւսներից, ինչ և ինչէ նա աւելի հաստատուն է, աւելի երկարատև: Եւ ասացի համարեա իբրեւ ջանաչիւր երկրում, որովհետև կան բացառութիւններ: Պարզեմ ասածու: Նէթէ քաղ ասալ զնաեւր լինէք մէկը միւսից աւելի բարձրակրթ երկրները, դուք կը նկատէք, որքան

սրու/թեան միու/թեան անխախտ
լինելու համար:

Ֆրանսիական ազգային ժողովի
վերջին լրացնող ընտրութիւնները
ժամանակ Ռօդօ քաղաքի պատ-
գամաւոր ընտրվեց երևելի յեղա-
փոխական, արմատական Ռանկի,
որ իբրև պետական յանցաւոր
բանտում նստած է մինչև այժմ:

Այդ ընտրութիւնը սարսափելի ազմուկ բարձրացրեց և վերջէն երկու ամիսների ընթացքում վիճաբանութիւնների առարկայ դարձաւ թէ ֆրանսիական և թէ օտար պետութիւնների քաղաքական շրջաններում:

Որովհետև Բաղնիկի բանտարկված էր նոյնպէս այն պատճառով, որ մասնակցել էր Կոմունային, շատերը սպասում էին, որ հանրապետութեան նախագահ Վրէլի նրան էլ միաների թուով ներումն կը հնորէ, որպէս զի ազատվի բանտարկութենից և կարողանայ պատգամաւոր լինել բայց նա ներումն չը ստացաւ:

Ֆրանսիական պատգամաւոր-
ների ժողովը պէտք է քուէար-
կէր Բանկիի ընտրութեան կանո-
նաւորութիւնը: Այդ քուէարկու-
թիւնը կայացաւ օրերումս և Բը-

մէկը միւսից յառաջողէմ է, ամբարն նորա երկ-
րագործների թիւը պակաս է, իսկ միւս կողմից
նորա հողից ստացած բերքերը աւելի են: Այսպէս
ստան, քաղաքակրթութիւնը աշխատում է՝ որքան
կարելի է խնայել մարդու ձեռքերը, մարդու ան-
միջական աշխատանքը, զեռեղելով նոցա ուրիշ
միջոցներով ուրիշ օգտուել բնութիւնից: Վերջէ
Ռուսաստանը, որը գործարարութիւնը դեռ չա-
զարգացած չէ և ուր բնակիչները ամենամեծ մասը
ղեցուք 80% հողագործութեամբ է պարագլու-
մէ: Վերջէք Վերմանիան, որը Ռուսաստանից ան-
համեմատ յառաջողէմ է և ուր ընդ որ բնակիչ-
ների միայն մօտաւորապէս 50% հողագործու-
թեամբ են պարագլում: այնուամենայնիւ, Եւրոմա-
նիան համեմատապէս աւելի բերքեր է տաւում
որ հողից, քան թէ Ռուսաստանը: Սպանիայում,
որը ամենաշակված երկիրներից մէկն է, հողա-
գործութեամբ պարագլուները կազմում են ամբողջ
ազգաբնակչութեան միայն մի քառորդ մասը, իսկ
աւելի քան երեք հինգերորդը տուած են իրանց
գործարարական կեանքին: Պրանսիայում հողա-
գործները կազմում են համարեա կէսը ամբողջ
ազգաբնակչութեան, այն է համարեա 19 միլիոն
37 միլլիոն բնակիչների վրա: Բայց մասնաւոր-
քիչ երկրագործներ կան Անգլիայում, ուր միւրե-
նաները ամենից շատ են տարածված, բանտորների
վարձը շատ բարձր, իսկ փողի տոկոսը շատ ցածր:
Ամենայն տեղ այդ նշաններով կարող էք խմանա-
թէ մեքանաներ գործածելը շահաւէտ է թէ ոչ: Այն-
երկիրներում, ուր վերելի հաւառւան է, այն է՝ քան-
տրի վարձը ցածր, իսկ փողի տոկոսը բարձր, մեքե-
նաները չեն կարող շահաւէտ լինել և հարկաւոր
բանակներ ձեռքեր միջնամանրի տեղ: Այստեղ լա-
ւեր համարում մի անբարեօրէն անել Վաշինգտոն
տակա չէ լսելը, թէ հարկաւոր է մեր հայ գիւղացի-

լանկի ընտրութիւնը 372 ձայնների բազմութեամբ 33 ձայնի դէմ անկանոն ճանաչվեցաւ:

Պատգամաւորների ժողովի այդպիսի վճիռը շատ լաւ տպաւորութիւն գործեց Ֆրանսիայի բոլոր բարեկամների վրա: Այդ վճիռը հաստատեց, որ Ֆրանսիական հանրապետութիւնը հաստատ հիմունքներ ունէ և որ կօմունական ճրգտումները նրան չեն կարող քնատել:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՈՒՆ ԳԱՐԳԱՆԵՆՅՈՒՆ

25 մայիսի

Հաղորդելով ձեզ հետեւեալ տեղեկութիւնը վարդապետ հայոց ծխական դպրոցի մասին, որ տեղեկացաւ դործին լաւ ծանօթ անձից, յուսով եմ որ պիտի տեղ տաք նրան (Վշակի) էջերում ձեռնարկութիւնը հանդէս բերելու և անարգարութիւնը պատժելու համար:

Վարդապետի ծխական դպրոցը, պ. Աղէքսանդր Սիւրիկեանի անձնուիրութեամբ և այդ դպրոցի ուսուցիչ՝ պ. Ստեփաննոս Տէր-Սարգսեանի *) եռամսհա աշխատութեամբ, բաւական բարեկարգ դրութեան մէջ գտնվելով, երկու տարի է որ գրաւել է գիւղի բոլոր հայ և մասամբ վրացի հասարակութեան ուշադրութիւնն ու համակրութիւնը: Բացի տեղացի հայերից, արմաշից մի մասը իր որդիներանց տալիս էր առաջ վրաց ուսումնարանն ուսուցանելու, և վրացիները, զգլած այժման իրանց ուսուցիչների արարածքից, դիմում են դէպի հայոց դպրոցը, թէ և այս վերջիններս (վրացիները) լընդիբը մերժում է դպրոցի բարերար և հոգաբարձու պ. Աղ. Սիւրիկեանը, զգուշանալով որ մի գուցէ այսպիսով դրգւէ իր դէմ նրանց դպրոցի ուսուցիչներին:

Այս տարի հայոց դպրոցում ուսանող աշակերտների թիւը 200-ի էր հասնում, որ հաւասար է ամբողջ գիւղի հայ բնակիչների թւին: Բացի այդ, կէսօրեանից յետոյ նոյն շինութեան մէջ պ. Սիւրիկեան:

*) Աս իր ուսումն աւարտել է Ներսիսեան դպրոցում և աւարտած օրից (երկու տարի է) որ աշխատում է օրընտօրէ ծաղիկեցնել այդ դպրոցը:

ներին մեքենաներ գործածել և հողագործութիւնը եւրօպական ամենակատարեալգործված եղանակով վարել: Մենք հակառակ չենք մեր հայկական երկրները գործութեան մէջ մի քանի նորութիւններ մտցնել, որոնք թէ մենք իր ցանկալիքը ցրել հայերի մէջ այն կարծիքը, թէ ամենայն բան միայն ցանկութիւնից է կախված: Ոչ թէ միայն ցանկութիւն, այլ և մեծ գիտութիւնների ունենալով անգամ մեր հանգամանքների շնորհով անկարելի է մտցնել կատարեալգործված եղանակները մեր հողագործութեան մէջ: Մեծ չափով փորձողները ի հարկէ այդ արդէն իմացած կը լինեն, հայրկաւոր է այդ իմաստն և ուրիշները, մանաւանդ նոքա, որոնք հետաքրքրվում են այդ հարցով և այդ գործով զբաղվել կուզեն: Երկրագործութիւնը, ինչպէս գեո. սկզբում ատացնիք, մեծ կախումն ունի երկրի ընդհանուր զարգացման աստիճանից, իսկ երկրի յառաջագիժմութեան նշաններն են՝ մի և նոյն կտոր հողի վրա անելի ժողովուրդը, երկրի աւելի մեծ հարստութիւն, նամանակէս որքան մի երկրի յառաջանում է, այնքան նորա հողը գինը բարձրանում է, փողի տուկոսը իջնում, իսկ բանւորների վարձը մեծանում: Վերջերք է այժմ մեր երկրորդ և կը տեսնէք դորա հակառակ հանգամանքներ, համեմատած Եւրօպայի հետ: Թողած հարցի միւս կէտերը, վերջինքը միայն մեքենաները, լաւ մեքենաները թանգ են, ուրեմն մեր գիւղացուն ցորենը թանգ կը նստի քանի որ մեքենան մեծքերը արժան են, նշանակում է նոքա, որոնք ձեռքով են աշխատել, նոքա կարող են ցորենը աւելի արժան ծախել, իսկ մեքենաներով աշխատողը, պիտի կամ քչով բաւականանայ և կամ վնաս կրէ իր ծախքից: Իսկ ինչու այդ մեքենաները պիտի աւելի թանգ նստեն մեզանում քան Եւրօպայում, այդ նորանից է, որ մեզանում փողը աւելի թանգ է, քան Եւրօպայում, ուստի և առա-

նի աշխատութեամբ երեք ամիս չէ որ սկսել էին ուսանել 60-ի չափ աղջիկներ, որ մինչև այժմ մի չը տեսնված բան է այդ գիւղում: Ի հարկէ սա մի շատ ուրախակի երևոյթ էր և մեծ յոյսեր էր խոստանում, եթէ այստեղ էլ, ինչպէս միշտ, չար նախանձը չը խանգարէր գործին:

Վրաց դպրոցի ուսուցիչները, տեսնելով օրէց օր իրանց դպրոցի անկումը և ընդհակառակ հայոց դպրոցի յառաջագիժմութիւնը, լցված վրէժիմդրութեանից ամեն տեսակ կեղտոտ միջոցներ են գործ դնում նրա դէմ: Նրանք, դիտենալով որ այդ դպրոցի ոյժը պ. Սիւրիկեանի մէջ է կենտրոնանում և որ նրան հարուածելով ամբողջ դպրոցը պիտի քանդուի լինեն, ամենայն եռանդով աշխատում են իրանց սև միտքը իրագործելու:

Նրանք մէկ մէկու ետեից խնդիրներ է որ տալիս են ցաւաւորեալներ, իբր թէ Սիւրիկեանը խարդախ է, գող է, գողերի պաշտպան է և այլն, և նրա անձի դէմ գաղտնի թակարդներ է որ արելով պարագում են: Եւ նրանք չեն սխալվում, իրանց հաշիւների մէջ. այժմ պ. Սիւրիկեանը էլ չը կարողանալով տանել այդ աստիճան թշնամական գործողութիւնները մի խումբ արկածախնդիրների, թողնելով իր սիրած գիւղը՝ վարդապետը, պատրաստվում է առանց մի որ և է բռնի միջամտութեան տեղափոխվել Նուխի: Եւ այս մտադրութեան մէջ նա աւելի ևս վճռվեցաւ, երբ մի 20 օր առաջ նրա քրօշ որդին՝ երիտասարդ Թադէոս Ստեփաննանը՝ օրը ցերեկով մի գաղտնի արձակած հրացանի գնատիկը սպանվեցաւ իր խնուրութեամբ առևտուր անելիս:

Քանի որ հաւաւապեալներ էլ այս բաների առաջն առնելու համար թող է չարժիւմ, ուրեմն պ. Սիւրիկեանի հրաժարվելը հաստատ բան կարելի է համարել և նրա թշնամիների անազնիւ նպատակները կատարված:

Իսկ խեղճ հայոց հաղիւ ծաղկած դպրոցը իր պաշտպանի հրաժարելուց յետ, զրկվելով անշուշտ և իր ուսուցիչից—իր կենդանութիւն տուող երկու աղբիւրներից—հասկանալի է որ պիտի թաւաթի և վերջապէս չորանայ...

Գուցէ չը հասկացվի այդ աստիճան թշնամութիւնը վրաց ուսուցիչների, մինչև չափի թէ ուրքեր են դրանք և ինչպիսի բնաւորութեան տէր անձինք են:

Դրանք են պ. պ. Կ. Բ. և Կ. (այս վերջինիս աղտութիւնը, որ ունէր առաջ, երկու առաջինների ազդեցութեան տակ այժմ կորել է), որոնք առաւօտից մինչև երեկոյ տարվայ մեծ մասը նստած Սովիւր-Բուլաղի (ցուրտ ջրեր) գլխին կենում են Բաբայի կենացը, թուրքերէն չիբաստէն կըլըլըցանելով և թէ այնուհետ ինչ աշուտ... այն իրանց գլուխը դիտէ, միայն թէ չափազանց զրուսացնում են տեղացի հայ և վրացի ժողովուրդին իրանց ընկած վաղը ու բարբոթ: Աւելորդ չէ ասել որ սրանց, ինչպէս տեղեկացայ, օգնական, խորհրդակից և ընկեր է բոլոր գործերի մէջ:

Չենում փողը չափում է 6, 7, 8, 9, 12 և աւելի տոկոսով, քանի որ Եւրօպայում փողը բերում է 2 1/2, 3, 4, 5, տոկոս: Մենք ի բաց ենք թողնում ի հարկէ մի ուրիշ, ոչ անշուշտ հանգամանքը, որ մեզանում գործատուների պակասութիւնից, մեքենաները պիտի բերվեն Եւրօպայից, որը մեքենայի գինը համարեալ թէ կրկնապատկու է: Միայն թէ չը պիտի մոռանալ, որ մեր երկրագործութիւնը պիտի աշխատել յառաջանել, որքան կը յառաջանայ նոյն իսկ երկիրը. ուրիշ խօսքերով չիմել նորան որքան կարելի է ինտենզիւ:—*)

Մենք վերև ասացինք, թէ Վնդիկայի երկրագործները շատ քիչ են: Այստեղ պիտի աւելացած եւ, որ աշտեղ՝ առհասարակ երկրագործութիւնը տալիս է իր տեղը խաչնարածութեան: Այս վերջի քան տարիներում մօտ 30 հազար գեախատին սերմանիքով բուսված հողը դառել են արօտատեղեր: Գորա պատճառը ի հարկէ նորանումն է, որ միւր թանգ է, ուրեմն և աւելի չափաւէտ:—

Բացի այն զանազանութիւնից, որոնք ներկայացնում են զանազան կուլտուրի երկրները Եւրօպայում, կայ նաև մի ուրիշ կէտ, որը շատ զանազան է Եւրօպայի տեղութիւններում և որը միշտ զբաղեցրել է քաղաքա-անտեսներին թէ անցեալ և թէ ներկայ դարում: Այդ նա է, որ կան երկիրներ, որ հողի սեփականութիւնը շատ է բաժանված,

*) Քաղաքա-անտեսութեան մէջ զանազանում են երկրագործութեան երկու եղանակներ (սխտեմ). երբ հողի վրա քիչ են գործադրված կառուցում և աշխատանք, նորան ասում են էքստենզիւ հողագործութիւն: որքան կապիտալը և աշխատանքը մեծ գիւ խաչան հողի մէջ, այնքան հողը դառնում է ինտենզիւ: Որքան մի երկիր անշուշտ է, այնքան նա էքստենզիւ է, որքան մշակված, այնքան նա ինտենզիւ է:

կարգաւորվեցին հրաժարեցրած Մօլա Խաւսիքը, որի անձը քննութեան տակն է գտնվում: Վարդապետի հասարակութիւնը շատ ցաւում է Սիւրիկեանի հետաձգում համար և յուզված է դրոյցի սպասելիք վիճակի մասին: Արդեօք ո՞վ պիտի կարողանայ այնուհետև պահել դպրոցը փտանդից:

Ձ.

ՆԱՄՈՒՆ ԳԱՐՄԻՑ

22 մայիսի

Վարան իր սահմակով մեծ տաքնապի մէջ է գտնվում, որովհետ օրընտօրէ գաղթականութեան լափող հրդեհը սաստկանում է: Իւրաքանչիւր որ հարկւրաւոր թիւը ընտանիք կառավարութեան թոյլատուութեամբ ուղևորվում են դէպի Կարին: Ամենահարուստ կալուածատէր Խամայի-աղան արդէն ճանապարհ է ձգել իր ընտանիքը և ինքը միայն մնացել այստեղ կալուածները վաճառելու: Գաղթականների շարժական, մանաւանդ անշարժ կայքերը վաճառվում են ամենահինգի ցնորով: հայերից շատերը թէ են ցանկանում են գնել նոյա անշարժ կայքերից և եղել են գնորդներ, բայց կասկածում են հաստատութեան համար: Կան նաև հարուստ մալականներ, որոնք վստահաբար գնում են և գնել են բաւական կալուածներ:

Թափի արած հողերը, արտերը, կամ սէզերը մնում են տաքն հաստատման կառավարութեան կողմից և այդ իսկ առթիւ առ այժմ գնորդներ տակա են: Բաւական բաժնի Շիրակայ հայ գիւղերից շատերը, որոնք հողերի խիստ պակասութիւն են գտնւում, տեղափոխվել են Կարինում միւս մասը, թիւքերի թողած գիւղերը, իսկ կառավարութիւնն առ այժմ այդ մասին դեռ ևս կարգաւորութիւն չէ արել: Գիւղացի գաղթող թիւքերը, որոնք ցանկ են իրանց արտերը, շտապով ծախում են իրանց արտերի երեսները, բաւականանալով միայն սերմի գնով:

Առ հասարակ հայերը վատ են վարվում թիւքերի հետ և այդ պատճառով վերջինները սպաւում են Կարինի հայերից վրէժ առնուլ: Աւելի ցաւալիս այն է, որ թիւք կառավարութիւնը գաղթականներին իրաւունք է տալիս Կարինի վրայէտում միայն բնակվել, ուրեմն և խառն հայերի հետ, որից ձօտակայ սպաւապում կը ծագի ողորմ մէջ մեծ խռովութիւն և որի համար քաղաքականութեան երկինքը նորից կամպի, ըստ որում մոլեռանդ գաղթականները վրէժիմդրութեան ոգով վառված կկառուեն իշխանութիւնն են պարտ, ուր ազատաբար յաղեցնել կարողանան իրանց մոլեռանդութեան չար կիրքը: Հեռատես մտածողը ի նկատի ունենալով այս հանգամանքը, անշուշտ կը դա պն հեղափոխութեանը, որ Բերլինի 61

յօդուածը իր իսկական նշանակութեամբ անկատար կը մնայ ճահահայտատանում, քանի որ այնտեղ ստուարանալով թիւքը ազգաբնակութիւնը՝ դարձեալ պիտի կրկնէ իր բարբարոսական ընթացքը և վրդովէ Եւրօպայի խաղաղութիւնը: Քանի որ դեռ գործի սկիզբն է, քանի որ չարամիտ և վրէժիմդր մոլեռանդները դեռ դադար չեն առել այս կամ այն տեղ, լաւ կը լինի, որ Օսմանեան կառավարութիւնը շուտով ձեռք առնի վերջինեալ յօդուածի գործադրութիւնը աւելի հզօր միջոցներով, կամ աւելի օգտաւէտ է հրամայել գաղթականներին Արաբստան գնալ Շամ ու Հալէպի կողմերը:

Եղբարեակերպ նամակս կամենում եմ մի խօսք էլ յիշել գաղթականների կարաւանի մասին, որ բաւականին հետաքրքրական է: Իւրաքանչիւր ընտանիք ունի մի, կամ եթէ հարուստ է, մի քանի ափական երկանիւ սայլեր, որոնք կտաւ ծածկոցներով անպէս խիստ ծածկված են, որ առողի ծակ անգամ չէ երևում: Այդ ծածկոցի տակ, էհրամի մէջ կօյրված, նստած է 9—80 տարեկան կանացի սեռը, իսկ բաց սայլերի վրա դրած են իրեղէններ: Արական սեռը, բացի երեխաներից, մի գաւազան ձեռքն, յաւալ է գտնւում սայլի երկու կողմից եղները ընկելով: Սայլի խիստ ծածկոցը նորա համար է, որ ըստ մահմետական կրօնի գեալութիւնները չը տեսնեն կանանցը: Իսկ ինչ կը վերաբերի տեղիս հայ ազգաբնակութեանը և նորա ունեցած ուսումնարանի ու գրաւարանին, հետեւեալ նամակովս կը ծանօթացնեմ (Վշակի) ընթերցողներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԷԼԳԻԱ

Անցեալ անգամ խօսելով պ. Յակովբի ճառի մասին, մենք խոստացել էինք մէջ բերել պ. Ժօտորանի ճառը, որը այնքան մեծ տպաւորութիւն էր գործել բոլոր կուսակցութեան անդամների վրա: Ահա սակայն այդ ճառը:

«Անցեալ դարու վերջից սկսած աշխարհական իշխանութիւնը բան ու գործ է չինել ամեն տեղ նորից նուաճել այն, ինչ որ իր սեփական ստացուածք էր: Այդ ժամանակահից սկսած ազգերը դարձրել են իրանց հասցեալը գէպի խղճի և կրօնի ազատութիւնը, որի նպատակն այն էր, որ աշխարհական իշխանութեան ձեռքը յանձնեն այն սովերը, ինչ որ հասարակաց օգտին է նուիր-

բերը պատկանում են 7—8 մարդկանց: Ի հարկէ թէ մեծ և թէ փոքր հողային բաժանումները ունեն իրանց օգուտները և իրանց վնասները. եթէ ունէք մեծ հող, դուք կը գնէք մեքենաներ, կը շինէք ամբարներ և այլն ամբողջի համար. եթէ մի և նոյն հողը բաժանէք տասը մաս, իւրաքանչիւր հողագործը պիտի իր համար առանձին շէնքեր շինէ, առանձին մեքենաներ առնէ, առանձին կառավարիչ, հաշուապահ և այլն ուրիշ ծախսեր առնէ, գործնով երկիրը աւելի չի հարստանալ, որովհետ հարստութիւնը կայանում է ստացած արդիւնքի մէջ և ոչ մեծ ծախսերի մէջ: Միւս կողմից, եթէ հողը շատ է փոքր, ոչ ոք նրա վրա շատ չի աշխատի. քանի որ նա լաւ կը մշակէր, եթէ նա կազմէր մեծ կալուածքի մի մասը, բայց եթէ երկրագործութիւնը մի երկրում շատ առաջացած է, մարդիկ կրկնված, այնտեղ փոքրիկ հողերը կարող են աւելի հսկովել տեղերից, աւելի մշակվել, ուստի և աւելի արդիւնք տալ, ինչպէս այդ Ֆրանսիայումն է (Բելգիայի մի մասը), որի հողագործութիւնը բոլոր ազգերից բարձր է: Այդ հարցի մէջ խառն է նաև քաղաքական կողմը: Անձնական սեփականութիւն ունենալը մարդուս բարձրացնում է, նրան չիտում է աւելի անկախ ուրիշներից, վերջապէս հաւատարմ է, որ ինչ զօրազդութիւն է որ պատահի իր ուրիշ գործերի մէջ, նա կարող է գոնէ իր սեփական տան և կալուածքի մէջ մի շատ թէ քիչ երանաւէտ ապաստան գտնել, քանի որ սեփականութիւն չունեցողը կարող է կամ բաղդին զոհ լինել և կամ ուրիշներից կախված լինել:

(Կը շարունակվի)

ված: Հոգեորականները ամբաստանում են զրանտական յեղափոխութիւնը, ասելով որ բոլոր այս անկարգութիւնների շարժառիթը նա էր: Դա մի անհերքելի սխալ է, այդ կը նշանակէ մէկի փառքը միւսին տալ: Ամերիկային է պատկանում այն պատիւը, որ նա 1796 թիւն Հիմնեց աշխարհական պետութեան ձևը: Բայց և այնպէս Միացեալ Նահանգների Հանրապետութիւնը երբեք բռնակալ պետութիւն չէ համարված: Միացեալ Նահանգների և Ռուսաստանի մէջ մի անդունդ կայ: Սեղ ամբաստանում են թէ մենք վարվում ենք այնպէս, ինչպէս կ'զգայինք անգամ չէին վարվել: Դրան մենք կը պատասխանենք, որ մենք անում ենք այն, ինչ որ աշխարհին երեսին ամենապատկաւականն ազգի քաղաքացիներն արել են մեզինց առաջ: Կղերականութիւնը դուր է հայհոյում այս շարժմանը: Դործը անհաղթար առաջ է գնում տարածելով ամենուրեք իր շուրջը ազատութիւն և կենսք: Զուր տեղն են աշխատում քահանաները սոցիալական մտքերը ներկայ շարժման արդիւնք համարել: Ահաւասիկ մի քանի օրինակներ, որոնք ցոյց են տալի, թէ ինչպէս ազդերը ման են զայլ սատանայական ճանապարհի մէջ: Պատը դատապարտում է քաղաքական ամուսնութիւնը, մի և նոյն պապը դատապարտում է և կրօնի ազատութիւնը: Պատասխանը չուշացաւ: Աստիւն պատուեց պապի հետ ունեցած իր դաշնակցութիւնը: Առիթն ամբողջ աշխարհի ընթացքը հակառակ է վատիկանին, որը նրանց նշովում է և որոնց ձայնը արձագանք է գտել Բէլգիայում: Այսօր մեզ հարցնում են թէ ինչ ենք կամենում անել:—Մենք կամենում ենք քանդել այն հողակոյտը, հետեւ մեր հին աւանդութիւններին, և քանդել այն հողակոյտը (dogma) որ խոչնդոտ է լինում Բէլգիայում գործերի սովորական ընթացքին: Մասնով ևս պատասխանում են, որ այն ամբաստանութիւնները, որ անում են ներկայ վերանորոգութեանը, մի բռնաբարութիւն է, որ ոչինչ raison d'être չունի:

«Այ, սա մի պատահական կարգիչ չէ, որին մենք կամենայինք բաւականութիւն տալ: Մենք կամենում ենք անել այն, ինչ որ անում են բոլոր այն ազգերը, որոնք ընդունել են կրօնի և խղճի ազատութիւնը:

«Ասում են, որ այդ օրէնքը պիտի և տաղալի է, որովհետեւ նա կամուր է անում կրօնի դատաւորութիւնը, մինչդեռ նա ստիպել ցուցիչ է անում մարմնամարդկան կրթութիւնը: Բայց մի՞թէ մենք իրաւունք ունենք սրա համար օրէնքին հայհոյել: Նի՞թէ հայհոյել պէտք է, դա ոչ թէ օրէնքին, այլ դա պէտք է սահմանադրութեանը վերաբերել, որը մեզ հրամայում է այնպէս վարվել:

«Բայց յիշեցէք, որ դուք էլ մեզ հետ էիք սահմանադրութիւնը քաղաքական: Ուրեմն ինքներդ ձեզ մեղադրեցիք: Օրէնքը ոչ պիտի, և ոչ ամբարշտ է: Իսկ եթէ կարծում էք, որ նա հակառակ է հասարակաց օգտին, դուք էլ շատ լաւ գիտէք, որ հասարակաց օգտի արդար կշիւը սահմանադրութիւնն է: Սեղ մնում է այժմ քննել թէ արդեօք, ինչպէս շատերը պնդում են, օրէնքը բռնաբարում է քաղաքացիների անձնական իրաւունքները: Ասում են, որ պետութիւնը պէտք է ընտանիքի հօր մատակարարէ մի այնպիսի դատաւարակ, որ նրան բոլոր տեսակեանց էլ հաճելի լինի. ուրիշ խօսքով թող պետութիւնը կամ մի այնպիսի իդէալական ուսումնարան չիւնի, որ ամեն մի անհատ իրան երեսակարար է կամ բնաւ թող չը չենի: Նի՞թէ մենք ընդունելիք այս սխալման, ուրեմն պետութիւնը կամ պէտք է բոլորովին հրաժարվել, և կամ այնպիսի ուսումնարան պէտք է չենի, որը համապատասխան ընդունումը ներքին հայրերի ցանկութիւններին, ուրիշ խօսքով նա իւրաքանչիւր հօր համար պէտք է միմի ուսումնարան չենի:

«Պետութեան հրաժարելը մեզ դէպի կուրսուտ կը տանէր: Վերջապէս մենք հասկացանք ձեր «Պետութիւնը թող դուրս կորչի ուսումնարանից» աղաղակը: Այդ խօսքը ձեր բռնաբարութեան միակ նշանակութիւնն ունի: Թող պետութիւնը վճարի, իսկ եկեղեցին կառավարի: Նա խորը կերպով համոզված են, որ բոլոր ձեր ցանկութիւնները միայն ցոյցնում են իր միտքն, և հաւատացէք, որ իմ սածնները բնաւ զորք չեն. ես ինձ սահմանափակում եմ միայն ճշմարտութիւնն ասելով, այն է, որ եթէ սահմանադրութիւնը ոտքի վրա մնայ, ձեր սխալման ընդ միշտ խորանկլած է: Սահմանադրութիւնը պահանջում է պետութեանը գործել: Մեր բռնած ընթացքը բոլորովին համապատասխան է ներկայ աշխարհական շարժմանը, իսկ դուք ցանկանում էք, որ Բէլգիան այսօր հրաժարվի այն մեծ գործից, որի սկզբնապատճառը 1830 թիւն ինքը եղաւ: Մենք ունենք 1845 թիւականի իրանդական օրէնքը, Ժընէվի կանտոնի սահմանադրութիւնը, Բադէնի դքսութեան օրէնքը, Աւստրիայի 1867-ի օրէնքը, Մեզլայի 1870-ի մեծ յեղափոխութեան կանոնները, Ցիւրիխի կանտոնի 1872-ի օրէնքը, Զուիցերլանդի դաշնակցական սահմանադրութիւնը, վերջապէս Հոլանդական օրէնքը, և այլն, և այլն: Ահա թէ մեր ներկայ վերանորոգութեան վերաբերութեամբ ինչ են մտածում ազատ ազգերը: Զարեգանք երկար կը լինի, եթէ ես մի առ մի քննել այդ օրէնքները, բայց դրանց բոլորի միտքն էլ նոյնն է—բաժանել բոլորովին կրօնական ուսումը աշխարհական ուսումից:

«Ահաւասիկ այն սխալմանն որին դուք աւերիչ ու կործանիչ էք համարում: Թող տուէք մեզ վերջին ծիծաղել այդ գեղեցիկ սարսափի վրա, որին դուք այնքան սեւեւ եղծնեցիք էք նկարագրում: Մենք կարող ենք անխղճ ու խաղաղ արտով հիմնել մեր հասարակաց ուսումնարանները. մենք կարող ենք և դա ամենամահաճեալ կէտն է, արմատական անել եկեղեցական վերահսկողութիւնը, որը 1842-ի օրէնքի ամենանոր մոլութիւնն է: այս տեսակ եկեղեցական վերահսկողութիւն նոյն իսկ անգլիական օրէնքի մէջ էլ չէ կարելի տեսնել: Նա բոլորովին համաձայն են այն շարժման հետ, որ սկսել է Բէլգիան, ուրիշ բան է, եթէ այդ շարժումը սկսվել մի այնպիսի երկրում, ուր ուսումնարանը հիմնվում է մի կոյն հողի վրա: Խոսքերը, ուրեմն պետութեանց, ինչ որ նա մեզ յիշատակ կարող է տալ:

«Մենք կամենում ենք, որ պետութիւնը բարոյականութիւն չտոգրացնէ: Իսկոյն հագարաւոր աղաղակներ են բարձրանում: Նոյն տեսակ բարոյականութիւն էք կամենում տալ ժողովրդին: Նա չը գիտեմ, ի՞նչու այսքան աղմուկ: Օրինակ վերցնենք ուրիշ երկրներից, օրինակի համար սովորեցնենք այն, ինչ որ սովորեցնում է Ժընէվի կանտոնը:

«Մեզ ասում են, որ մեր բարոյականութիւնը շատ միջակ է, իսկ ես կասեմ, որ մեր օրէնքների բարոյականութիւնը բաւականութիւն է տալի ամեն պահանջներին: Ամեն չարագործութիւն, ամեն երեսնագործութիւն պատժվում են մեր օրէնքով. մենք մինչև անգամ երբեմն չափազանցութեան ենք հասնում, որովհետեւ մի քանի դէպքերում մենք պատժում ենք նրանց, որոնք չեն կամենում այս կամ այն ծառայութիւնը ընդունել: Մենք չենք խօսում բարոյականութեան մի հրահանգ կազմելու. մենք միայն ասում ենք, որ այն օրէնքները, որոնց վրա հիմնվում են բարու և չարի գաղափարը, ուսուցիչը այդ բանի մասին ոչինչ չը պէտք է խօսի, որովհետեւ դա երեկոյն կարողութիւնը շատ բարձր է: Նա շատ կը ցանկանայ իմանալ թէ մարդկային բնութեան մասին ինչ գաղափար ունեն նրանք, որոնք կամենում են երեկոյն միշտ ընկճված ու ճնշված տես-

նել, սարսափի ու սպառնալիքի ճիրանների առաջ: Ախ, փոքր ինչ վտահ լինիք բարութեան գործութեան մասին: Նա խորհուրդ էմ տալի սրա մասին փոքր ինչ հետեւ մասնութեան պատգամներին, թէպէտ և պէտք է խոստովանած, որ այդ պատգամները նոյն չափ աստուածային չեն, որչափ և Մայիսի բրիտանականը, որ մեզ հրամայում է յարգել քահանային, մինչև անգամ եթէ նա վատ բարոյականութեան տէր լինի (Միծաղում են):

Մի քանի կրեթականներ մեզ հարցնում են թէ ի՞նչ պէտք է սովորացնէ պետութիւնը: Նա չը գիտեմ թէ այդ մարդիկ ինչ օգուտ ունեն, որ այդպէս բաներ են հարցնում: Բայց որովհետեւ նրանք անպատճառ կամենում են, ես կասեմ:

«Պետութեան դատաւարակները կը սովորացնեն իրանց մանուկ սաներին, որ տանուվեց երրորդ դարում ինկվիլիցիան (հաւատարմութիւն) 100,000-ից աւելի զոհ տարաւ:

«Նա կը սովորացնի, որ Հոլանդիայի ինկվիլիցիան աւելի անտանելի էր, քան թէ Սպանիային:

«Նա կը սովորացնէ, թէ ինչ եղաւ Մարտիկը Վենսուէլլը, թէ ինչ եղան հագարաւոր խեղճեր, թէ ինչ եղան այդ դարու երեւելի քաղաքացիները:

«Նա կը սովորացնէ, թէ ինչպէս Վիլհելմ Նասսաուս, որին դուք ձեր մէջ իբրեւ անստուած էք համարում, ընկնելով մի եղեռնագործ մարդասպանի հարուածների տակ, կանչում էր—Աստուած իմ, Աստուած իմ, զիտեցէք իմ հոգուս, զիտեցէք այս խեղճ ժողովրդին, որը իր ազիտութեան մէջ չը գիտէ թէ ինչ է անում:

«Ահա թէ ինչ կը սովորացնէ պետութիւնը, որը կամենում է զրօշմէ մատաղ սերնդի արտում ազատութեան և ներդաժնութեան վէճ սկզբունքը: Նա պէտք է, որ նա այնպէս վարուի, որպէս զի պահպանէ մեր երկրի քաղաքական կարգադրութիւնները: Խոցելը այժմ ազգային պաշտպանութեան վրա է և պետութիւնը պէտք է գէշը ձեռնի պաշտպանել իր իրաւունքները, դա մի գործ է, որի նման սրբազանը մենք դեռ չենք տեսնել:

«Դուք այնքան էք, թէ այն դատաւարակները, որոնք կը նշանակվեն պետութեանց, կաշտատեն կորցնել կաթօլիկական հաւատը: Բայց թող տուէք ինձ ասելու, որ այնպէս խօսելով, դուք կարծես թէ թերահաւատ էք երեւում, դուք ուրեմն վստահութիւն չունէք ձեր պաշտած կրօնի վրա: Նա չեմ հաւատում այն երկրիւղին, որ դուք արտայայտում էք, և ես ինձ թոյլ եմ տալի դրա վրա ծիծաղել: Նի՞թէ ձեր ասածներին հաւատանք, դուք գործում էք ուսումնարանի մի խեղճ ուսուցչի առաջ: Այ, դուք չէք կարող հաւատացնել ինձ այս տեսակ բաներ:

«Վերջին օրերս խօսք կար նոյնպէս և ուսումնարանի մէջ եղած կրօնական պատկերների մասին: Գիտե՞ք թէ Իրլանդիայի ուսումնարաններում ինչ են անում այդ պատկերների հետ, նրանք երբեք դուրս չեն դալի պահպանել, և կամ եթէ դուրս էլ են դալի, այդ պատահում է միայն կրօնի դասի ժամանակ. և այս բոլորը լինում է եպիսկոպոսների հաւանութեամբ:

Հետոքը մի ջերմ վերջաբանով ասաց. «Եթէ երկիրը կամենում է մեծ և զօրեղ լինել, դրա համար մենք մեր ձեռքին լաւ միջոց ունենք. —Ջան անք աշխարհական ուսումնարաններ ունենալ:

Ներկայումս ու խլացուցիչ ծախսահարութիւններից յետոյ հետոքը ամբողջից ցած իջաւ. և այդ ճառով էլ վերջացաւ այդ օրվայ նիստը:

Հետեւալ օր ամեն քաղաքացիների խօսակցութեան նիւթը այդ ճառն էր, որը մի ահագին տպաւորութիւն գործելով ընդհանուր վրա, կարծես կիտով չափ վճռել էր ընդհանուր հարցը:

ՆԱՍՏԱԿ ՊԱՐՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Դարեմ, 19 մայիսի

Երէկ, մայիսի 18-ին (գիշերը), վերջապէս մեր թատրոնական խումբը ներկայացրեց իր երրորդ և վերջին ներկայացումը: Դա «Անեքերիմ Վադուր» Էլ քաղցած ենք: Կատակերգութեան հետ, Այս վերջին ներկայացումն աւելի շքեղ պատրաստված լինելով, աւելի էլ լաւ գնաց քան առաջին երկուսը, մասնաւոր որ այս անգամի մուտքն էլ աւելի էր: Թատրոնականները թէ հայ, թէ եւրոպացի և թէ պարսիկ, բոլորն էլ խիստ գոհ էին, վկայելով մի և նոյն ժամանակ, որ մի կարճ միջոցում մի քանի երիտասարդներից կազմված խումբով առանց մի թատերասէր բնկերութեան, առանց մի հաստատուն դրամագլխի, դրամից աւելի լաւ ներկայացումն էր կարելի տալ, այն էլ մի չարժական վրանի տակ, այն էլ Պարսկաստանում, որտեղ հանդիպում է մարդ հարկւաւոր դժուարութիւնների և խափանառիթների: Կրտ համար վերջին ներկայացումն ասացի, որ սկզբից էլ մեր դերասանական խումբը սրտէկ էր միայն երբեք ներկայացում չը տալ: Արդարեւ նա հասաւ իր ցանկութեանը, նա, չափ դժուարին արգելքների յաղթահարելով, իր նպատակը դաժնիով պատկեց, բայց և դրանով ամեն բան չը վերջացաւ, այլ դա միայն սկիզբն էր երկանց, պէտք է աշխատել որ դա շարունակութիւն ունենայ: Այժմ մեր քաղաքի հասարակութեանն է մնում որ դրա համար մտածելով, հարկ եղածը որոշէ, որպէս զի մի մանկանաւոր և հաստատ դաշնէ ունենայ թատրոնական բոլոր պարագաներով: Ես թէ ևս այս տողերը գրում եմ, սակայն կասկածում եմ, որ չուտով իմ խօսքը «ձայն բարբառոյ յանապատի» կը դառնայ, որովհետեւ սա մի փորձված ճշմարտութիւն է, որ մեր Դավիթ ժում ամեն բանի հիմն դրած ժամանակ, «Դավիթ» նա և դրուստիք պակաս չեն եղած, բայց շատ չուտով նրանց յաղթել են զի խառ հան զգալ: Վերջապէս սրտանց կը ցանկանայի որ իմ այս կասկածանքս փարատվէր և մեր թատրոնը իրականութիւն տեսնար:—Ես մի առանձին նամակով էլ պէտք է գրեմ մեր ազգային ընթերցարանի այս տարվայ նիւթական և բարոյական դրութիւնը, որը այս տարի դաժնաւոր, ինձանից անկախ պատճառներով ուշացրի զրկել «Մշակից»:

Մեր ընթերցարանի լրագրների և հանդէսների համար միայն այս անգամ կուզէի մի քանի խօսք ասել: Ընթերցարանն ստանում է Խուսափանից «Մշակը», «Մեղուն» և «Փորձը» դրամով և «Արա» բառը նուիրաբերութեամբ պ. Մամասարեանցի, որը իր ժամանակին հանում է տեղաւ, սակայն վերի երեք լրագրներից միայն «Մշակն» է կանոնաւոր կերպով տեսցվում, մնացեալ երկուքը խիստ անմասնակի և պակաս խուրով են հանում քաղաքս: Որքանակ համար այս տարվայ «Փորձ» յունվար և մարտ ամիսների տետրակներն ստացվեցան մեր ընթերցարանում ներկայ մայիս ամսում: «Մեղուն» թիւերն էլ շատ անգամ պակաս է ստացվում, այն էլ շատ ուշ, որ ցատակ է վաճառի «Մեղուն» պ. խմբագրի բացի մի օրինակ դրամով գնածը, ազգայնաբար նուրից է իրանից երկու օրինակ աւելի: պարտին յայտնում ենք չնորհակալութիւն և խնդրում ենք ուղղել այդ պատկերութիւնը: Մենք ներկայ տարվայ համարը գրել ենք ժամանակին և Պոլսի պ. Հաջնանին, որ Չմիւսնիայի Արեւելեան Մամուլն ուղարկէ, բայց այդ հանդէսն էլ մինչև այսօր չը ստացվեցաւ:

Արմենակ

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մայիսի: Պետական բանաւր կը յայտնում է երրորդ արեւելեան փոխառութեան օրիգինալների ստորագրողներին, որ նրանց օրիգինալների համար շտապարկած 7,443,700 ռուբլու գումարը հետեւեալ վերապով կը կարգադրվի: Այն անձինք, որոնք անտարգրվել են մինչև 10,000 ռուբլի, ստորագրութեան գումարը ամբողջութեամբ կը ստանան, իսկ նրանք, որոնք 10,000 ռուբլուց աւելի են ստորագրվել, նրանք 10,000 ռուբլու ամբողջութեամբ չեն ստանայ, այլ շուրջ կը ստանան մնացած յայտնի գումարի 30/100 իսկ մնացածը, որ 50 ռուբլից պակաս կը լինի, չէ ընդունվի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մայիսի: Պետական բանաւր

կի 5%, տոմսակր առաջին շրջանի արժէ 95⁷/₈ ռ., երկրորդ 95 ռ. 25 կ., երրորդ 95¹/₈ ռ., չորրորդ 95¹/₈ ռ., ներքին 5%, առաջին փոխառութեան տոմսակր արժէ 242 ռ. 50 կ., երկրորդ 238 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 92⁷/₈ ռ., երկրորդ 94 ռ., ոսկի 8 ռ. 48 կ.: Ուստի 1 ռուբլ 1 ծնդծնի վրա արժէ 23⁵/₈ պէս: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-Հրատարակող Գրիգոր ԱՐԵՐՈՒՆԻ

ПОСЛЕДНЕЕ ОТКРЫТОЕ ПИСЬМО г. ЭКСУ.

Въ сегодняшнемъ №-рѣ „Тифл. Вѣстн.“ намъ пришлось прочесть вашъ отвѣтъ на наше открытое письмо. Къ сожалѣнію, какъ не непріятно, по мы должны опять взяться за перо и побесѣдовать съ вами, г. Эксъ. По прочтеніи вашего отвѣта, мы пришли къ тому заключенію, что „игра свѣчей не стоитъ“, т. е. не стоитъ полемизировать съ Вами, потому что Вы совершенно съ ложной точки зрѣнія смотрите на армянскіе спектакли. Заплативъ за ваше мѣсто, вы требуете отъ любителей того, чего можно требовать только отъ хорошихъ, опытныхъ актеровъ; даже иногда отъ игры послѣднихъ мы не получаемъ должнаго эстетическаго наслажденія. Что же требовать послѣ этого отъ г. г. любителей! Излишнюю строгостью въ рецензіяхъ мало можно принести пользы, такъ точно, какъ и хвалебными гимнами. По отношенію къ г-жѣ Пашаянъ Вы, какъ и авторъ замѣтки, напечатанной въ армянской газетѣ „Пчела Арменіи“ объ армянскомъ спектаклѣ 16-го мая, чрезчуръ далеко пошли. Вы находите ее обыкновенной посредственностью, онъ же считаетъ ее чуть-ли не за очень даровитую, а главное-она ему представляется послѣдовательницей натуральной школы. Кого изъ васъ слушать г-жѣ Пашаянъ! Мы же посоветуемъ какъ г-жѣ Пашаянъ такъ и вообще нашимъ новымъ грузинскимъ и армянскимъ любителямъ относиться къ здѣшнимъ газетнымъ рецензіямъ если не совсемъ безразлично, то очень и очень осторожно. Наши рецензенты въ глазахъ общества пока не представляютъ собой компетентныхъ судей.

Кромѣ всего этого вы, г. Эксъ, позволяете себѣ сказать, что даже по одной сценѣ можно опредѣлить есть ли талантъ въ комъ нибудь, или его нѣтъ. По нашему же мнѣнію бываютъ такіе исполнители съ талантомъ, которые въ иныхъ роляхъ прекрасны, а въ другихъ плохи. Возьмите любую труппу! хоть труппу г. Пальма, Развѣ вамъ не приходилось видѣть г-жѣ Казловскую, Алексѣеву, г. г. Пальма, Соколова и др., исполняющими однѣ роли хорошо, другія плохо? Что бы сказали о г-жѣ Козловской, если бы Вы ее видѣли въ первый разъ въ „Вѣтеркѣ“.—Слѣдовательно по одному спектаклю вообще, а тѣмъ болѣе въ любительскихъ, нельзя опредѣлить есть ли у того-то талантъ, или его нѣтъ; для этого нужно имѣть весьма крупный талантъ которымъ рѣдко кто обладаетъ.

Что же касается вашего знанія армянскаго языка и софистики словъ довольно удачно, нѣкоторый и т.

п., я оставляю эту часть отвѣта безъ вниманія. Вообще г. Эксъ, нельзя Вамъ не посоветовать стараться какъ можно меньше выѣзжать на фразѣхъ; однѣми фразами ничего не подѣлаешь!

Не могу не уличить Васъ въ противорѣчіи, рѣзко бросающемся въ глаза. Въ отвѣтѣ вы общаете рецензировать армянскіе спектакли только въ томъ случаѣ, если они не будутъ стоить ниже всякой критики, что было до сихъ поръ по вашему мнѣнію. Между тѣмъ въ своей рецензіи о спектаклѣ 16-го мая, Вы сказали, что „пѣса видимо была не дурно срепетирована и шла съ нѣкоторымъ ансамблемъ“. Что за противорѣчіе! Или быть можетъ мы должны понять этотъ отзывъ въ дурномъ смыслѣ: неужели это значитъ, что спектакль 16 мая стоитъ ниже всякой критики? Такого логическаго заключенія нельзя вывести, это только вы одинъ, г. Эксъ, можете сдѣлать подобное умозаключеніе.

Въ концѣ концовъ считаемъ своимъ долгомъ Вамъ напомнить, что только тотъ можетъ рецензировать, кто пользуется компетентностью своихъ мнѣній; но Вы, къ нашему же сожалѣнію, не захотѣли имъ заручиться, а потому послѣ первой же рецензіи вы потерпѣли фіаско такъ, что даже печатно въ Васъ предполагаютъ ученика Надлера и товарища Яблочкина (см. рецензію въ „Пчелѣ Арменіи“). А все таки скажу Вамъ, г. Эксъ: примите нашъ добрый совѣтъ—вычитесь сначала армянскому языку а потомъ и пишите рецензіи объ армянскихъ спектакляхъ! Заканчивая письмо, предупреждаю васъ, г. Эксъ, что отвѣчать Вамъ больше не буду по двумъ слѣдующимъ причинамъ: во первыхъ—не стоитъ полемизировать изъ за ошибочнаго взгляда на игру любителей и во вторыхъ—считаю неудобнымъ занимать столбцы газетъ „Тифл. Вѣстн.“ и „Мшакъ“, нашей полемикой, надѣясь, что въ почтенныхъ редакціяхъ находятся статьи съ гораздо большимъ общественнымъ интересомъ, чѣмъ наши.

Одинъ изъ многихъ

31 Мая

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ДВОЙНАЯ ИТАЛИАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ տալիս է ՀԱՇՈՒՍՈՒՄԻՆԻՔԻ զանազան (բանկի, ֆաբրիկի, ԱՌԵՏԻՏԻՍԻՔԻ ԿՈՍՄԻՍԻՏԻՆԻՔԻ, երկաթուղու և այլն) հարցերի և խնդիրների զրահմանը կամ դիմել Թիֆլիսի Կապիտալի Պալատը ուղղակի պ. Յակոբ Տէր-Յակոբյանցին:

ԹԻՖԼԻՍԻ ԳՍՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԵՐ յայտնում է, որ իր ներկայութեամբ յունիսի 6-ին ԱՃՈՒՐԻՔԻ իր լիակազմով տալու համար ՀԻՆԳՏԱՐԻ Ժամանակով 656 քառակուսի սաժէն մեծութեամբ քաղաքային հողը, որ գտնվում է քաղաքի երկրորդ բաժնում, 10-դ մասում, Կուր գետի առաջին գաղիկայրի մոտ, երիտօրի տան դիմացը: Այդ հողի սահմանները հետևեալներն են. հիւսիսից Կ. Բոնդուխչյան նարեթեայա փողոցը, արևելքից և հարավից Կուր գետը, արևմուտքից Խալիլովների կալուածները:

1—3

ՄԻՔԵՏԻՆԵԱՆ ԿԼԱՐՈՒԳԻ մօտ Զուբարովի տան մէջ գտնված Ն. Ա. ԴՕՍԱՐԱՅԿՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ զրահով և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, գրում է առևտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՍՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻ և նոյն տեղը գտնվում է «ԽՈՐՀՐԴԱՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ՐԱՂԱՐԱՅՈՒՆ, ԲՐԷՆԿԱՆ և ԼՈՒԵՏՐԱԿԱՆ» գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՄՈՐ ԼՇԽԱՏԱՆՔՆԵՐՆԵՐԻ ԿԼԱՐՈՒՄԻՆ: Ի նկատի ունենով «ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՀԱՏ աշխատանքները ցանկացողները հրապարակում են ԸՆԿԵՐԱՆԵԼ: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը:

2—5

Կերկայ 1879 թ-ի յուլիսի սկզբեց, տէրութեան Թոյլուութեամբ, Թիֆլիսի մէջ հրատարակելու է ուսու «ԿԱՅԿԱՅ» լրագրի չափով, քաղաքա-գրականական շաբաթաթերթ «ԸՀԽԱՍԱՆՔ» ուսու և հայ լեզուներով հետևեալ պրօգրամով:

- 1) Գաղափարական ժամանակագրութիւն.
 - 2) Տեղական կենսիքի ուսումնասիրութիւն. թէ անտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից:
 - 3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ. լինեն նրանք Թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Վնագրատութիւն ուսու, հայ և օտարագրի գրականութիւնների:
 - 4) Վաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
 - 5) Մանր լուրեր:
 - 6) Մանաւոր յայտարարութիւններ:
- «ԸՀԽԱՍԱՆՔ» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, Թիֆլիսում, առանց տուժ հասցնելու.
- | | |
|--|------------|
| Տուժ հասցնելով | 5 ռուբլ. |
| Ուսուից զանազան քաղաքների ղրկելով | 5 ռ. 50 կ. |
| Փոստային գաղնակցութեամբ ղրկելով արտասահման | 6 ռուբլ. |
| Ստորագրութիւն ընդունվում է Թիֆլիս Կենտրոնական գրադաճառանոցում: | 7 ռուբլ. |
- «ԸՀԽԱՍԱՆՔ»-ի համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «ԸՀԽԱՍԱՆՔ» լրագրի խմբագրին այս հասցեով: Գրիգորիո Թեր-Մելիկ-սետով, րեդաէորս Գազէի «ԸՀԽԱՍԱՆՔ»-ի, Վ. Սոլոլախ, Նա Սոլոլախսկայա Ս. Վոզնեսենսկայա քաղաքի վոլնի աստաղի մոտ Դ. Միխայիլ Գալուստով փող. № 110.
- Կիւմուր և անմշակ յօդուածներ «ԸՀԽԱՍԱՆՔ»-ի խմբագրութիւնը ընդունում է միայն և յատկապէս ուսու, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով:
- Խմբագիր-Հրատարակող Գրիգոր Տէր-Միքայիլեան:

Ներսիսեան հայոց Ազգային-հոգևոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ:

Ամիս և ամսաթիւ	Դասատուներ	Առարկաներ
Մայիսի 2	Ե. Զ.	Ռուսաց լեզու
3	Ե. Զ.	Հայոց լեզու
7	Ե. Զ.	Ֆրանսիական լեզու
11	Ե. Զ.	Ընդհանուր պատմութիւն
14	Ե. Զ.	Աղբերա և երկրաչափութիւն
15	Պատրաստականի 1 և 2 բաժանմունքները	Բոլոր առարկաներից
16	Պատրաստականի 3 բաժանմունքը	այոց լեզու և Թուրքականութիւն
17	Պատրաստականի 3 բաժանմունքը	Միացած առարկաներից
18	Ե.	Կրօն և Տօմար
22	Ե.	Նկերչեցական պատմութիւն
23	Ե.	Մանկավարժութիւն
25	Ե.	Ռուսաց պատմութիւն
26	Ե.	Կրօն և Աստուածաբանութիւն
28	Ե.	Ֆիզիքա և բնագիտութիւն
30	Ե.	Հայոց մատենագրութիւն
31	Ե.	Հայոց պատմութիւն
Յունիսի 4	Ե.	Աշխարհագրութիւն
5	Ե.	Ընդհանուր մատենագրութիւն

I, II, III և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատենագրից լինելու են I և II դասա. տանց մէջ մայիսի 2-ին և 23-ին իսկ III և IV դասատանց մէջ մայիսի 24-ին, 25-ին և 27-ին:

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26 լինելու է զինի ճաշու 5¹/₂ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից. իսկ պատրաստական դասատան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտները:

Պաշտօնակատար տեսչէ Արշակ Նահապետեան

Երևանեան հրապարակի վրա ԹԱՄԱՐՇԵՎԻ կարավանարայի ղէմադէմը № 11. տան վերի յարկում վարձով արվում է մէկ ԳԱՀԻՃ ծառայով, լա. կարավանով և առաւօտ-երեկո ամսովարով. դահլիճը մի բալկոն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 ռուբլ: Բացի դահլիճը մի և նոյն տանը վարձով արվում են նոյնպէս առանձին ՍԵՆՍԱԿՆԵՐ կարավանով, ծառայով ամսովարով և լուսաւորութեամբ. այդ սենեակները ամսական արժեն 25, 20 և 15 ռուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան գրան առաջ միւր ծախող ՅԱԿՈՎԻՆ: